

ԱԶԳԱՅԻՆ

Հանգուցեալ երջանկայիշատակ Տ. Գէորգ Դ. Հայրապետի մահումը Հայրապետական Գահը թափուր մնալուց յետոյ, այն առատ դատողութիւնները և լրագրական գրուածքները, որ շարունակվում են ցայսօր նոր Հայրապետի ընտրութեան համար՝ ապացոյց են, որ ազգը ընդհանրապէս է այն մեծ նշանակութիւնը, որ կայ Հայրապետի և իւր միջև. ապացոյց է որ, այդ ընդհանրապէս է բարոյական կապը ազգի և Մայր Աթոռի հետ: Այդ դատողութիւններն ու գրուածքները ցոյց են տալիս՝ որ ազգը մի որոշ աստիճանի գիտակցութեան է հասել. և տեղի են տուել անտարբերութիւնն ու անհոգութիւնը, որ նկատելի եղել են երբեմն ազգային և եկեղեցական գործերում:

Մենք անցեալ տարի Արարատի մէջ «Սուրբ Էջիպէի տաճարի» վերանագրով մի շարք յօդուածների մէջ, Սինոդի գործերից քաղուածք անելով՝ հրատարակեցինք Պօլօփենայից յետոյ եղած Հայրապետների ընտրութեան մանրամասնութիւնը. այդ քաղուածքների մէջ յիշուած են Պօլօփենայի յօդուածները և այլ վարչական հրահանգները ընտրութեանց ժամանակ:

Այժմ թեթեալի յիշենք թէ նախնումն ինչպէս է կատարուել Հայրապետի ընտրութիւնը և Հայրապետի վերաբերմամբ ընտրական սկզբունքը երբ է մտել մեր ազգի մէջ: Առաջին ընտրեալ Հայրապետն է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, որի ընտրութիւնը Ազատագրող աշխատանք է համառօտում: Քսկ թագաւորն Տրդատիոս Հանդերձ միաբանութեամբ, կնաւ իւրով Աշխէն տիկնաւ, և իւրով քրէներն Խոսրովիդիստով հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրաց իւրոց. և վաղվաղակի հասանէին ի ժամադիրն ըստ հրամանին՝ ի կողմանս Արարատեան գաւառին ի վաղարշապատ քաղաք: Քանզի թագաւորն չու արարեալ անգր հասանէր, և կուտեցան զօրք ամենայն, մեծամեծք, կուսակալք, գաւառակալք և սպասուորք, զօրագլուխք զօրօք, պետք, և իշխանք, նախարարք, և ազատք, դատաւորք և պատուականք հասեալ կային առաջին թագաւորին: Խորհուրդ ի մէջ առեալ թագաւորին ընդ ամենեսին փութալ հասանել բարեաց գործոցն լինել ժառանգաւոր: Եկայք ասէ, ձեպեսցուք, զայս առաջնորդ կենաց մերոց, տուեալ մեզ Աստուծոյ, զԳրիգոր հովիւ կացուցա-

նել մեզ զի լուսաւորեսցէ զմեզ մկրտութեամբ և նորոգեսցէ զմեզ օրէնսուսոյց խորհրդով արարչին մերոյ Աստուծոյ:» (Ագաթ. երես 295. տպեալ յՕրթագիւղ ի 1822 թուին:)

Հիմք ունենալով այս, կաթողիկոսի օծման մաշտոցը իբրև ազգային եկեղեցական օրէնք աւանդումէ. «Յորժամ հանդերձեալ լինին ի բարձրացուցանել զոք ի պատիւ կաթողիկոսութեան տանս Հայոց նախ ընդէլ պարտ է. ըստ կաթողիկէ եկեղեցեացն սահմանի բոլոր ժողովուրդը Հայասեռ ազգիս հանդերձ ժառանգաւորօք եկեղեցւոյն և երկոտասան եպիսկոպոսօք ընտրեն ի նոցանէ զերիս արս՝ և քննութեամբ ամենայն ժողովոյն ընտրեն զմի ի նոցանէ վկայեալ յամենայնի ի գործս բարիս և ի վարս առաքինիս սուրբ և անարատ գիտութեամբ և իմաստութեամբ լի, որ կարող իցէ հովուել զժողովուրդն, որ յԱստուծոյ հաւատասցի նմա »:

Վերջին դարերումն երբոր Հայաստան երկիրը բռնակալների և բարբարոսների երեսից սկսեց ամայանալ, ամենայն տեղ սկսեց տիրել ահ ու սարսափը աւազակութեանց և ասպատակութեանց սլաւնառով՝ որով անհնար էր անվտանգ երթևեկութիւնը, կաթողիկոսի ընտրութիւնը կատարումէին միայն Սուրբ Եջմիածնի վանականքը և Արարատեան նահանգի՝ Կաթողիկոսի թեմականքը. բայց ընտրեալը կոչումն և Սուրբ օծումն ընդունումէր Տաճկահայոց հաճութիւնն ու Օսմանեան պետութեան սուլթանի հրովարտակն և Պարսից շահի բաղամը ստանալուց. յետոյ: Երբոր Հայերը Ռուսաստանում բազմացան՝ հայրապետները թէև Պարսից իշխանութեան երկրում, սակայն անհրաժեշտ համարեցին ստանալ Ռուսաց կայսրների հրովարտակը սկսեալ Սիմէօն Կաթողիկոսից:

Այն տագնապալից ժամանակները, երբ ոչինչ ապահովութիւն չըլար, պէտք չէ զարմանալ որ ազգը Կաթողիկոսի ընտրութեան մասնակցումէր միայն թղթով. այժմ ժամանակները փոխաւած են. ամենայն գիւրութիւն ընձեռուած է թէ երթևեկութեան ճանապարհների կանոնաւորութեամբ և թէ ապահովութեամբ: Ազգի պատիւը, եկեղեցու փառքը և Կաթողիկոսական կոչման վսեմութիւնը սլահանջումէ որ Կաթողիկոսի ընտրութիւնը կատարուի ազգի հոգեւորական և աշխարհական պատգամաւորների ներկայութեամբ, և այդ ներկայութիւնը պէտք է լինի ո՛ւր—եթէ ոչ այն.

տեղ՝ ուր յարդ եղել է, այսինքն Վաղարշապատի Կաթուղիկէ Մայր Եկեղեցում: Այգալէս սկսուել է Սուրբ Գրիգոր Լուսաւորչից, այգալէս ևս պէտքէ շարունակուի:

ՀԱՇԻԻ ԲՈՆԱԿՈԹ ԳԻԻՂԻ ԴՊՐՈՑԻ.

Սիւնեաց վիճակի Բոնակոթ գիւղի հոգևոր ծիսական դպրոցի հոգաբարձութիւնը ուղարկելով Դպրոցի տնտեսական հաշիւը՝ յայտնումէ որ Հոգաբարձութիւնը բաղկացած է տասն և չորս անձինքներից, որ 1878 թուից ցայսօր ստանձնելով Դպրոցի Հոգաբարձութեան պաշտօնը՝ իւր կարողութեան չափ աշխատել է արդիւնաւոր անել: Սկզբում օգնող չէ ունեցել, բայց անցեալ տարի օգնել են մի քանի գիւղերի Հայ հասարակութիւնք նուիրաբերելով իրանց երկրի ընդեղէններից, նուիրատուաց անուանները թէև ուղարկուած է ի հրատարակութիւն՝ բայց թերթի անձկութեան պատճառով չենք կարող կատարել Հոգաբարձութեան ցանկութիւնը:

1883 թուին զրամական օժանդակութիւն եղել է. Քարահունչից՝ 1 ըուրլի. Տուրքից 2 ըուր. Գեօրիսից՝ 12 ըուր. 40 կոպ., Շաղաթից 16 ըուր. 80 կոպ., Շնաթաղից՝ 2 ըուր., Բալակից 2 ըուր. 25 կոպ., Շուշիից՝ 2 ըուր. 10 կոպ., Բոնակոթից՝ 9 ըուր. 40 կոպ., Ալիաթիանից 2 ը. 75 կոպ., Ուղ գիւղից՝ 2 ըուր., Ձէյվայից՝ 2 ըուր., Լորից 1 ըուր. 50 կոպ., Աղքեանդից՝ 1 ըուր., Ղարաքիլիսայից՝ 1 ըուր., Անգեղակոթից՝ 1 ըուր., Խընձորեսկից՝ 3 ըուր., չորս պարօնայք և դպրոցի ուսուցիչ 8 ըուրլի: Գումարն է 70 ը. 20 կ:

1883 թուին ցորենոյ օժանդակութիւն է եղել,

Սում. 2ան.

Բոնակոթից	.	.	.	.	.	.	.	175	3
Աղքեանդից	.	.	.	.	.	.	.	8	3
Ուղ'ց	.	.	.	.	.	.	.	15	
Գումարն է								199	

Մ Ո Ւ Տ Գ.

Հոգաբարձութեան շահեցրած ընդհանուր զրամոց և ցորենոյ գումարը 1878 ամի Յունվարի 1ից ց1ն Սեպտեմբ. 1883 ամի.

Ի 1ն Օգոստ. 1882 ամի ց1ն Յունվարի 1883 ամի. ի նուիրատու անձանց.

Ցորենի և զրամի գումարը նուիրած զանազան մարդկանցից որք տպուած են Արարատի անցեալ համարի մէջ.

Ի 10ն Մարտի 1883 ամի ց1ն Գեկտեմբ. նուիրատուներից ուցակով.

Ը.	Կ.	Սումար	2անաղ
845	75	492	4
26	85	38	3
67	20	198	4